ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն 119/ԾՊ-21

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվող գրադարանավարների վերապատրաստման դասընթացներին մասնակցության մասին

ք. Երևան «09» մարտի 2021 թ.

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» (ԲՊՀ) հիմնադրամը, այսուհետ՝ Համալսարան՝ ի դեմս ռեկտոր Կարինե Հարությունյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող և «Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Նարինե Սահակյանի, այսուհետ նաև Պատվիրատու մյուս կողմից, երկուսով միասին հիշատակման դեպքում նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների կատարման համար:

1.2 Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները (այսուհետ Ծառայություններ)՝ Պատվիրատուի գրադարանավարին ընդգրկել իր կողմից կազմակերպվող գրադարանավարների վերապատրաստման դասընթացներում:

2. Գրադարանավարների վերապատրաստման դասընթացների կազմակերպումը

2.1 Պատվիրատուն Համալսարանում կազմակերպվող գրադարանավարների վերապատրաստման դասընթացներին իր գրադարանավարի մասնակցության համար գրանցվում է՝ նշելով գրադարանավարի անուն, ազգանուն, հայրանունը, դասընթացներին գրադարանավարի մասնակցության ժամանակահատվածը: Դասընթացները կազմակերպվում են 2021 թ.-ի մարտի 10-12-ը:

2.2 Գրադարանավարների վերապատրաստման դասընթացներին Պատվիրատուի գրադարանավարի մասնակցելու սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված վարձավճարը Պատվիրատուի կողմից վճարվում է փոխանցումով՝ Համալսարանի պայմանագրում նշված բանկային հաշվին:

2.3 Կողմերի միջև կնքված սույն Պայմանագրի հիման վրա գրադարանավարների վերապատրաստման դասընթացները իրականացվում են խմբային ուսուցման եղանակով:

2.4 Խմբային ուսուցումը կազմակերպվում է համաձայն ներկայացված օրակարգի:

2.5 Գրադարանավարների վերապատրաստման դասընթացները իրականացվում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետ-դասախոսների միջոցով:

2.6 Պայմանագրով սահմանված ժամկետներում գրադարանավարների վերապատրաստման դասընթացը ավարտելուց հետո, սահմանված կարգով Համալսարանի կողմից Պատվիրատուի գրադարանավարին է տրվում գրադարանավարների վերապատրաստման դասընթացներին մասնակցելու փաստաթուղթ (հավաստագիր):

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Համալսարանը պարտավոր է՝

3.1.1 Պատվիրատուին ծանոթացնել գրադարանավարների վերապատրաստման ծրագրերին, դրանց մատուցման պայմաններին համալսարանի ներքին կարգապահական կանոններին:

3.1.2 Սույն պայմանագրի 4 կետով սահմանված վարձավճարը Համալսարանի բանկային հաշվին փոխանցելուց հետո Պատվիրատուի գրադարանավարին թույլատրել մասնակցելու գրադարանավարների վերապատրաստման դասընթացներին:

3.1.3 Ապահովել անհրաժեշտ պայմաններ գրադարանավարների վերապատրաստման ուսուցման ծրագրով անցկացվող վերապատրաստման գործընթացի, դասախոսների աշխատանքի որակի նկատմամբ:

3.2 Համալսարանը իրավունք ունի՝

3.2.1 Պահանջել Պատվիրատուից և գրադարանավարից սույն պայմանագրի 3.3.1, 3.3.2, 3.3.3, 3.3.4, 3.3.5, 3.3.6 կետերում նշված պահանջների կատարում:

3.3 Պատվիրատուն պարտավոր է՝

3.3.1 Ապահովել սահմանված դասաժամերին իր գրադարանավարի մասնակցությունը գրադարանավարների վերապատրաստման դասընթացներին:

3.3.2 Վճարել պայմանագրի 4.1 կետում նշված գումարը:

3.3.3 Գրադարանավարը պարտավոր է՝

3.3.4 Դասընթացներին մասնակցության ընթացքում դրսևորել պատշաճ վարքագիծ:

3.3.4 Չվնասել համալսարանի գույքը:

3.3.5 Հատուցել իր կողմից Համալսարանի գույքին պատճառված վնասը:

3.3.6 Ենթարկվել Համալսարանի ներքին կարգապահական կանոններին:

3.5 Գրադարանավարը իրավունք ունի՝

3.5.1 Ստանալ համապատասխան որակի և ծավալի ծառայություն:

4. Պայմանագրի գինը և վճարման կարգը

4.1 Պայմանագրի գինը գրադարանավարների վերապատրաստման դասընթացներին մասնակցության համար սահմանվում է 23.000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է վերապատրաստման նյութերի, գրենական պիտույքների, վկայագրի և սննդի փոխհատուցում:

4.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության համար վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, կանխավճարի ձևով՝ պայմանագրի կնքումից հետո 3 (երեք) օրվա ընթացքում:

5. Կողմերի պատասխանատվությունը և վեճերի լուծման կարգը

5.1 Սույն պայմանագրի 5.3.1, 5.3.2, 5.3.3, 5.3.4, 5.3.5, 5.3.6, կետերում նշված պահանջների խախտման դեպքում Պատվիրատուն և գրադարանավարը ենթակա են պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ, ԲՊՀ-ի կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված կարգով:
5.2 Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև ծառայության մատուցման համար սահմանված ժամկետի ավարտը:

7. Այլ դրույթներ

7.1 Պայմանագրում կատարված փոփոխությունները կամ լրացումներն իրավական ուժ են ստանում, եթե դրանք կատարվել են գրավոր և ստորագրվել Կողմերի կողմից: Կատարված փոփոխությունները կամ լրացումները համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս:
7.2 Սույն պայմանագիրը կնքվել է 2 հավասարազոր օրինակներից, որոնցից մեկը տրվում է Պատվիրատուին, մյուսը մնում է Համալսարանում:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
ք. Երևան, Թումանյան 42
«Այդի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11815000773000
ՀՎՀՀ 00005614

Ռեկտոր՝ Կ. Հարությունյան

____
(ստորագրություն)

Պատվիրատու

«Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ
ք" Վանաձոր, Ազատամարտիկների պ․ 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900238000534
ՀՎՀՀ 06909818

Տնօրեն՝ Ն. Սահակյան

____
(ստորագրություն)

Գրադարանավար՝ Գրիգորյան Արսինե

____
(ստորագրություն)